ԳԵՈՔԱՐՏ ՍՊԸ
Ք. ՎԱՆԱՁՈՐ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ 5/3-2

ООО ГЕОКАРТ
Г. ВАНАДЗОР
УЛ. НАЛБАНДЯН 5/3-2

ԼԻՑԵՆԶԻԱ ЛИЦЕНЗИЯ
ՔՊԼN001672

ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/63

# Ն Ա Խ Ա Գ Ի Ծ
# П Р О Е К Т

Լոռու մարզի Վանաձոր համայնքի
Թամանցիների փողոցի հիմնանորոգման
նախագիծ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ N001672

ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/63

Լոռու մարզի Վանաձոր համայնքի
Թամանցիների փողոցի հիմնանորոգման
նախագիծ

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՆԳՃ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՃԱՐՏ.ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001672, 2-րդ դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-10-30, «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 5/3-2

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG63-8A51-585D-F377**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001672-09

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ԹՈՒՆԵԼՆԵՐ, ՈՒՂԵԱՆՑՆԵՐ, ԷՍՏԱԿԱԴԱՆԵՐ, ՀԵՆԱՊԱՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

30.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG9C-9388-81F7-F7C3**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
| --- | --- | --- | --- |
| ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | Հ | 002095 | 2024-09-14 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG9C-9388-81F7-F7C3
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## *«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ» ՍՊԸ*

# Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՅՈՒՍԱԳՈՐԾՆԵՐ, ԹԱՄԱՆՑԻՆԵՐ,ԿԱՐԲԻՇԵՎ, ՍԱՐԻ ԹԱՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

*Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս*

Տնօրեն՝ Հ. Տիտիզյան

Երևան 2025թ

**Բացատրական մաս**

Համաձայն «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի և համապատասխան առաջադրանքի 2025 թվականի հոկտեմբեր ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Աղյուսագործներ, Թամանցիներ,Կարբիշև, Սարի թաղ 1-ին փողոցների և Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների համար։ Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա- ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Աղյուսագործներ, Թամանցիներ,Կարբիշև, Սարի թաղ 1-ին փողոցների և Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները․ ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղազննության, ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում մեր կողմից կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**<u>Գեոմորֆոլոգիական տեսակետից</u>** Հետազոտվող տարածքը գտնվում Լոռու մարզում՝ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում: Աշխարհագրական դիրքի առումով տեղակայված է Վանաձորից անմիջապես հյուսիս-արևմուտք՝ Փամբակ գետի աջ ափին՝ ծովի մակարդակից մոտ 1400 մ բարձրության վրա :

**<u>Կլիմա</u>** Ուսումնասիրվող տարածաշրջանի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24«Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Վանաձոր համայնքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները:Ուսումնասիրվող տարածքը գտնվում է բարեխառն լեռնային կլիմայական գոտում: Բնորոշ է տևական, ցուրտ ձմեռներ, համեմատաբար տաք ամառներ: Բացակայում են «զգալի սառնամանիքներով» և «սառնամանիքներով» եղանակները:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 7.8 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 36°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -30°C

- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 73%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 59%
- Օդի հարաբերական խոնավությունը  ամենաշոգ ամսվա 56%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 550-650մմ:
- Քամու միջին տարեկան  արագությունը 2.2մ/վ
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը 74սմ է:




Նկ. 3  Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական  կտրվածքում մասնակցում են Չորրորդականի հասակի լավաները, որոնք ներկայացված են, անդեզիտային բազալտներով, դացիտներով:Այս ապարները հիմնականում ծածկված են էլյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական  կտրվածքում մասնակցում են Չորրորդականի հասակի լավաները, որոնք ներկայացված են, անդեզիտային բազալտներով, դացիտներով:Այս ապարները հիմնականում ծածկված են էլյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին: հիդրոերկրաբանական պայմանների ձևավորումը պայմանավորված է տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքով, ֆիզիկա-աշխարհագրական և

կլիմայական առանձնահատկություններով: Ըստ ֆոնդային տվյալների մինչև 7.0մ խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվելը գտնվում են ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկա-երկրաբանական երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը չեն նկատվել:

**Շրջանի սեյսմիկ պայմանները**

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.5g արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:




***Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը***

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով,բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա:Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ N1 Ասֆալտային քայքայված շերտ

Շերտ N2 Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով :

Շերտի կտրված հզորությունը 2.0մ

Բնական խոնավությունը 26-28%

Տեսակարար կշիռը 2.70 գ/սմ3

Ծավալային կշիռը 1.90 գ/սմ3

Կմախքի ծավալային կշիռը 1.50 գ/սմ3

Ներքին շփման անկյունը 240

Շաղկապման ուժը 0.03 կգ/սմ2

Ծակոտկենությունը 44%

Ծակոտկենության գործակիցը 0.80

Դեֆորմացիայի մոդուլը 180 կգ/սմ2

Թույլատրելի լարումը 3.0 կգ/սմ2

Բնահողերի սեյսմիկ կարգը II

Շինարարական մշակման խումբը 12 - IV կարգ

**ՆԿ0.0+000-ՆԿ7+10**

0.0-0.20մ Ասֆալտային քայքայված շերտ

0.20-2.0մ Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով :

**ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհ**

**ՆԿ0.0+000-ՆԿ3+55**

0.0-0.20մ Ասֆալտային քայքայված շերտ

0.20-2.0մ Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով :

**ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոց**

**ՆԿ0.0+000-ՆԿ1+66**

0.0-0.20մ Ասֆալտային քայքայված շերտ

0.20-2.0մ Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով :

**ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Կարբիշևի փողոց**

**ՆԿ0.0+000-ՆԿ3+42**

0.0-0.20մ Ասֆալտային քայքայված շերտ

0.20-2.0մ Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով :

ՀՀ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԻ ԹԱՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑ

**ՆԿ0.0+000-ՆԿ5+00**

0.0-0.20մ Ասֆալտային քայքայված շերտ

0.20-2.0մ Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ մոտ 20%-ի հասնող կավավազային լցանյութով, մինչև 15% բեկորանյութով:

Հողի հատկությունների դաշտային հետազոտության նպատակներն ու մեթոդները ինժեներա-երկրաբանական հետազոտությունների ժամանակ.(ГОСТ 32868 — 2014 ДОРОГИ АВТОМОБИЛЬНЫЕ ОБЩЕГО ПОЛЬЗОВАНИЯ Требования к проведению инженерно-геологических изысканий) Таблица А

| Գործոն | բարդության կատեգորիա |
|---|---|
| | I (միջին բարդության) |
| Գեոմոֆոլոգիական պայմաններ | Մակերեսը թեքվածությամբ, մանր թմբավոր, թեթև մասնատված |
| Գեոլոգիական կառուցվածքը և հողի/գրունտի հատկությունները շինությունների և կառույցների երկրաբանական միջավայրի հետ փոխազդեցության տեսանկյունից | Նստվածքների մինչև երեք գենետիկ տեսակ, ոչ ավելի, քան չորս<br>հողի շերտեր տարբեր<br>տեսակների,<br>տեղակայումը<br>թեքությամբ կամ դուրս մղմամբ, հզորությունը<br>փոխվում է օրինաչափորեն:<br>Կանոնավոր օրինաչափորեն փոփոխավում է<br>Հողերի/գրունտերի հատկությունների ցուցանիշները<br>հատակագծով կամ խորությամբ.<br>Ժայռոտ հողեր անհավասար<br>Ծածկված են<br>ոչ մեծ հզորությամբ քարքարոտ հողով: |
| Հիդրոգեոլոգիական պայմանները շինությունների և կառույցների երկրաբանական միջավայրի հետ փոխազդեցության տեսանկյունից | Ստորերկրյա ջրեր բացակայում են |
| Շինարարության պայմանների և շինությունների ու կառույցների շահագործման վրա բացասական ազդեցությամբ վտանգավոր գեոլոգիական գործընթացները | Բացակայում են: |
| Տեխնոծին ազդեցություններ և փոփոխությունները տիրապետած տարածքներում | Աննշան են և<br>հաշվի չեն առնվում ճարտարագիտության մեջ,<br>երկրաբանական հետազոտություններում<br>և նախագծման մեջ |

Հողի հատկությունների դաշտային հետազոտության նպատակներն ու մեթոդները ինժեներա-երկրաբանական հետազոտությունների ժամանակ.(ГОСТ 32868 — 2014 ДОРОГИ АВТОМОБИЛЬНЫЕ ОБЩЕГО ПОЛЬЗОВАНИЯ Требования к проведению инженерно-геологических изысканий) Таблица Г

| Հողի հատկությունների դաշտային ուսումնասիրության մեթոդներ | Հողի հատկությունների դաշտային ուսումնասիրությունների նպատակները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ցուցանիշների սահմանում | | | | | | |
| | Երկրաբանական կտրվածքի մասնատումն և տարանջատում | հողերի ֆիզիկական հատկություններ | հողի հատկությունների դեֆորմացիա | Հողի ամրություն | Հենքերի/սյուների հիմքային հողի դիմադրություն | Հողի հատկությունների փոփոխականություն | Հենքերի/սյուների հողի մեջ խրելու և կրելու հնարավորության կարողությունների գնահատում | Ագրեսիվ |
| Ստատիկ զոնդավորում | + | + | + | + | + | + | + | + |
| Նմուշային հենքով/սյունով փորձարկում | + | + | + | + | + | + | + | + |

Հողերի ֆիզիկական և մեխանիկական հատկությունների լաբորատոր որոշման տեսակները ինժեներաերկրաբանական հետազոտություններում. (ГОСТ 32868 — 2014 ДОРОГИ АВТОМОБИЛЬНЫЕ ОБЩЕГО ПОЛЬЗОВАНИЯ Требования к проведению инженерно-геологических изысканий) Таблица Д

| **Լաբորտոր սահմանում** | **Հողեր** |
|---|---|
| | Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ |
| բնական խոնավությունը | + |
| Ծավալային խտություն | + |
| Տեսակարար Խտություն | + |
| Ծակոտկենություն | + |
| կապակցվածություն | + |
| Ծակոտկենության գործակից | + |
| Հողի մասնիկների խտությունը | + |
| Հոսունակության և գրդնակվելու/տրորվելու սահմանները | + |
| Ներքին շփման անկյուն | + |
| Ձևախախտման մոդուլը | + |
| Թույլատրելի լարումը | + |

*ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Աղյուսագործներ, Թամանցիներ,Կարբիշև, Սարի թաղ 1-ին փողոցների և Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացություն:*

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Ուսումնասիրվող տարածքում երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 2 շերտերով, որոնք ըստ ֆոնդային տվյալների ունեն բավարար ֆիզիկամեխանիկական հատկություններ:
- Տեղամասում ստորերկրյա ջրերը բացակայում են և ըստ արխիվային նյութերի գտնվում են 7մ-ից խորը հատվածներում:
- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքների կատարելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է
  - շերտ 2-ը / Տարբեր ապարներ մանրախճա-խճավազային նստվածքներ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
    - ✓ Դիմադրությունը $R_0$=3.5կգ/սմ$^2$

- Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,5g:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 74 սանտիմետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

**Երկրաբան՝** **Հ. Տիտիզյան**

*Աղյուսագործների փողոց*





*Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի*





*Թամանցիների փողոց*





*Սարի թաղ 1-ին փողոց*





*Կարբիշևի փողոց*





# Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ   Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ց Ա Ն Կ


1.ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն

2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության Կարգը

3. ԳՕՍՏ 32868-2014 Ավտոմոբիլային ճանապարհներ ընդհանուր կիրառության. Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների իրականացման պահանջներ

4. ՇՆՁ I 2-10-2002 Ինժեներաերկրաբանական հետազննություններ շինարարության համար

5. ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր

6.ԳՕՍՏ 58325-2018 (Հողեր. Դաշտի նկարագրություն(հետազոտության) ,

7. ԳՕՍՏ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.

8. ԳՕՍՏ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000804, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ,ԲՐՅՈՒՍՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀԱԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG3D-B197-32E6-5B48**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| ***ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ***<br>***Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման նախագիծ*** | | |
|---|---|---|
| ***Տեխնիկական միջոցի անվանումը*** | ***Տիպը*** | ***Պահանջվող քանակը*** |
| Ասֆալտբետոնի արտադրության գործարան | առնվազն 30տ/ուժ արտադրողունակությամբ | 1 |
| Ավտոինքնաթափ | ցանկացած | 3 |
| Էքսկավատոր | ցանկացած | 1 |
| Բետոնախառնիչ | ցանկացած | 1 |
| Ասֆալտատեղադրիչ | ոչ պակաս 3մ կարգավորող լայնությամբ | 1 |
| Ջրի մեքենա | ցանկացած | 1 |
| Գլդոն 6-8 տ | թրթռագլդոն | 1 |
| Գլդոն 9-11տ | պնևմաանվավոր | 1 |
| Գլդոն 12-18 տ | հարթ թմբուկավոր | 1 |
| Ավտոգրեյդեր | ցանկացած | 1 |

## *ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ*

| **Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման նախագիծ** | | | |
|---|---|---|---|
| **N** | **Աշխատանքի անվանումը** | **Չափման միավոր** | **Քանակ** |
| 1 | Ա/բ խառնուրդի կազմության ընտրություն (բաղադրատոմս),մանրահատիկ, տիպը | հատ | 1 |
| 2 | Ա/բ խառնուրդի կազմության ընտրություն (բաղադրատոմս),խոշորաահատիկ,տիպը | հատ | 1 |
| 3 | Ավազ ա/բ խառնուրդի համար | նմուշ | 1 |
| * | խոշորահատիկ ա/բ-ի համար 1000մ3-ից 1 նմուշ | նմուշ | 0 |
| * | մանրահատիկ ա/բ-ի համար 1000մ3-ից 1 նմուշ | նմուշ | 1 |
| 4 | Խիճ ա/բ խառնուրդի համար | նմուշ | 2 |
| 5 | Ա/բ խառնուրդ ԱԲԳ-ից, մանրահատիկ, ամեն 500տ 1 նմուշ | նմուշ | 2 |
| 6 | Ա/բ խառնուրդ ԱԲԳ-ից, խոշորահատիկ,ամեն 500տ 1 նմուշ | նմուշ | 3 |
| 7 | Ա/բ խառնուրդ տեղադրված փռված,չխտացված,մանրահատիկ ամեն 500տ 1 նմուշ | նմուշ | 1 |
| 8 | Ա/բ խառնուրդ տեղադրված փռված,չխտացված,խոշորահատիկ ամեն 500տ 1 նմուշ | նմուշ | 3 |
| 9 | Հանքային փոշի | նմուշ | 1 |
| * | մանրահատիկ ա/բ-ի համար 200տ-ից 1 անգամ | նմուշ | 1 |
| * | խոշորահատիկ ա/բ-ի համար 200տ-ից 1 անգամ | նմուշ | 1 |
| 10 | Կապակցող նյութ բիտում | նմուշ | 0 |
| * | մանրահատիկ, ամեն 50տ 1 նմուշ | նմուշ | 0 |
| * | խոշորահատիկ, ամեն 50տ 1 նմուշ | նմուշ | 0 |
| 11 | Բնահող լիցքի համար սկզբում 1 նմուշ, հանքավայրը փոխելու դեպքում, յուրաքանչյուր հանքից մեկ նմուշ | նմուշ | |
| 12 | Բնահողային լիցքի խտացում, յուրաքանչյուր 200մ ից 1 նմուշ | նմուշ | 0 |
| 13 | Խճավազային խառնուրդ C-5,C-6 հիմքի համար 1500մ3-ից 1 նմուշ | նմուշ | 0 |
| 14 | Խճավազային խառնուրդ C-5,C-6 հիմքի խտացում 500գծմ 1 նմուշ | տեղ | 0 |
| 15 | Ենթահիմքի լցանյութ, հանքից 1նմուշ, այնուհետև ամեն 2000մ3ի դեպքում 1 նմուշ | նմուշ | |
| 16 | Ավազակոպճային հիմքի խտացման ստուգում ամեն 200գծմ 1փորձ. | տեղ | |
| 17 | Ավազակոպիճ կողնակների համար 1 նմուշ,հանքավայրը փոխելու դեպքում, յուրաքանչյուր հանքից մեկ նմուշ | նմուշ | |
| 18 | Ավազակոպճային կողնակների տեղում խտացման ստուգում 1000գծմ 1փորձ. | տեղ | |
| 19 | Ա/բ խառնուրդ տեղադրված խտացված կեռային նմուշ(ամեն 7000մ2 համար 1 լրակազմ 3 նմուշ) | լրակազմ | 1 |
| 20 | Ցեմենտ | նմուշ | 2 |
| 21 | Ցեմենտբետոն (մեկ լրակազմը 3 խորանարդիկ) | լրակազմ | 4 |
| 22 | Կեռնային նմուշ ցեմենտով կայունացած | լրակազմ | 4 |
| 23 | Բազալտե եզրաքարերի փորձարկում | նմուշ | 3 |
| 26 | Հարթության որոշում , համաձայն ՀՇՆ IV-11.05.02-99, ՀՀ Կառավարության արձանագրային որոշում թիվ 38 29 սեպ.2016 | կմ | 0,166 |

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման  նախագիծ

Ըստ ժամանակացույցի շինարարության տևողությունը ընդունվում է 60 օրացույցային օր:
Շահագրգիռ կողմերի փոխադարձ համաձայնությամբ շինարարության տևողությունը կարող է փոխվել

| N ը/կ | Կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | I Ամիս | | | II Ամիս | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 10 օր | 10 օր | 10 օր | 10 օր | 10 օր | 10 օր |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| 1 | **Լաբորատոր  աշխատանքներ** | | | | | | |
| 2 | **Հողային աշխատանքներ** | | | | | | |
| 3 | **Մայթեր** | | | | | | |
| 4 | **Ճանապարհային պատվածք** | | | | | | |

Կապալառու կազմակերպությունից շինարարական աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաները:
ըստ « Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» հետևյալ ոլորտների՝

| Հ/Հ | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|
| 1 | 2 |
| 1 | Տրանսպորտային |

| Շինարարությունում օգտագործվող նյութերին և իրերին ներկայացվող նվազագույն պահանջները |
|---|
| Շինարարությունում օգտագործվող բոլոր նյութերը պետք է ապահովեն ՀՀ տարածքում գործող տեխնիկական կանոնակարգորին և պայմաններին համապատասխան և ունենան ՀՀ օրենսդրությամբ հաստատված համապատասխան որակի հավաստագիր |
| Արտադրողի կողմից հաստատված երաշխիքային ժամկետներ. |
| Նյութեր ՝ 3 տարի |

***Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման  նախագիծ***

*Նախատեսված աշխատանքների կատարման համար պահաջվում են՝ <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության  իրականացում >>լիցենզիա,  ըստ հետևյալ ոլորտի՝* ***Տրանսպորտային*** *:*

***Աշխատանքային ռեսուրսներ***

*Նախատեսված աշխատանքների իրականացման համար աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են.*

| N | *Որակավորումը* | ***Մասնագիտական փորձը*** | | |
|---|---|---|---|---|
| | | ***գործունեության ոլորտը*** | ***կատարած աշխատանքը*** | ***նվազագույն մասնագիտական փորձը*** |
| 1 | ճարտարագետ -շինարար կամ ճարտարագետ-ճանապարհաշինարար | տրասպորտային շինարարություն | ճանապարհների, կամուրջների  կառուցման աշխատանքներ | 3 տարի |
| 2 | տեխնիկ-շինարար կամ տեխնիկ - ճանապարհաշինարար | տրասպորտային շինարարություն | ճանապարհների, կամուրջների  կառուցման աշխատանքներ | 3 տարի |

# Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն- 4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման նախագիծ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Քարտեզ
Բովանդակություն
Լիցենզիա
Բացատրագիր
Տեխնիկական

*ԱՄՓՈՓԱԳՐԵՐ*

1. Երթևեկելի մասի վերականգնման ամփոփագիր - Ամփոփագիր 1
2. Հողային աշխատանքների ամփոփագիր - Ամփոփագիր 2
3. Իջատեղերի ամփոփագիր - Ամփոփագիր 3
4. Մայթերի ամփոփագիր – Ամփոփագիր 4
5. Երթեվեկելի մասի նշագծման ամփոփագիր- Ամփոփագիր 5
6. Ճանապարհային նշանների ամփոփագիր- Ամփոփագիր 6
7. Համահավաք ամփոփագիր - Ամփոփագիր 7

*ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ*

1. Երթևեկության կարգավորման սխեմա
2. Օբյեկտի սկզբում և վերջում տեղադրվող տիպային նշան
3. Ճանապարհային հագուստի կոնստրուկցիա
4. Հեղեղատար կոյուղու դիտահորի կառուցվածքը
5. Անձրևընդունիչի կառուցվածքը
6. Թեքահարթակներ
7. Մուտքերում թեքահարթակներ
8. Ջրընդունիչի կոնստրուկցիա
9. Ճանապարհային նշաններ
10. Գծանշումներ
11. Ճանապարհային նշանների կանգնակ

*ԳԾԱԳՐԵՐ*

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հատակագիծ | ՊԿ0+00 – ՊԿ18+00 | Մ 1:200 |
| 2. | Երկայնական կտրվածք | ՊԿ0+00 – ՊԿ18+00 | |
| 3. | Լայնական կտրվածքներ | ՊԿ0+00 – ՊԿ18+00 | |
| 4. | Հեղեղատար կոյուղի | ՊԿ0+00 – ՊԿ10+35 | Մ 1:500 |
| 5. | Հատակագիծ Նշագծում | ՊԿ0+00 – ՊԿ18+00 | Մ 1:500 |

# *ԲԱՑԱՏՐԱԳԻՐ*

*Սույն նախագծով նախատեսված է  Լոռու մարզի Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման նախագիծը:*
*Նախագիծը կազմվել է ըստ Վանաձորի համայնքապետարանի տրված առաջադրանքի:*
*Ներկայացված տեղամասի հետախուզական աշխատանքները իրականացվել են հունիս ամսին:*

## *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

*Տվյալ ճանապարհահատվածը գտնվում են ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում :*
*Վերանորոգվող ճանապարհի երկարությունը 166 գծամետր է, իրենից ներկայացնում Վանաձոր քաղաքում երկրորդային փողոցներից մեկը :*
*Ճանապարհի ուսումնասիրությունից պարզվեց, որ ճանապարհը ասֆալտապատ ճանապարհ է, սակայն ասֆալտի վերին շերտը քայքայվել է: Մայթերի վերին շերտը քայքայված է եզրաքարերը մաշված :*
*Ըստ առաջադրանքի անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները, գոյություն ունեցող պատվածքի հեռացում նոր պատվածքի տեղադրում Ինչպես նաև նախատեսված է իրականացնել մայթեր :*

## *ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ*

*Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր», ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերով և համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին> N105-Ն հրամանի՝ AutoCad և Civil3D համակարգչային ծրագրերով:*
*Ըստ տեխնիկական առաջադրանքի ճանապարհի պարամետրերը ընտրվել են*

- *երթևեկելի մասը - շարժման շերտերի լայնությունը՝ 2x3,2մ*
- *երթևեկելի մասը - շարժման շերտերի երկարությունը՝ 166մ*
- *Մայթեր 0,75-3,0մ*

*Հիմնվելով ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա, նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.*
*Նախատեսվում է*

- *Կատարել հողային աշխատանքներ*
- *Վերականգնել ճանապարհային հողային պաստառը*
- *Կառուցել ճանապարհային հագուստը*
- *Կառուցել մայթերը*

## *ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ*

*Հատակագծում ճանապարհներիի ծրագիծը մաքսիմալ նմանեցված է ճանապարհի գոյություն ունեցող ծրագծին:*
*Լայնական կտրվածքում, երթևեկելի մասի թեքությունը 20‰ է, Մայթերինը նույնպես*
*Երկայնական կտրվածքում առավելագույն թեքությունը կազմում է 29 ‰, իսկ մինիմումը՝ 20‰:*
*Նախագծման և տեղանքի նպատակահարմարությունից ելնելով լայնական կտրվածքները տրված են 20 մետրը մեկ:*

***Ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ծավալները տրված են համապատասխան ամփոփագրում:***

## *ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ*

*Հետախուզական աշխատանքների ժամանակ կատարվել է տախեոմետրական հանույթ 1:200 մասշտաբի:*
*Երկայնական կտրվածքը հիմնականում թողնվել է նույնը, որոշ հատվածներում նախատեսվում է իրականացնել պրոֆիլավորման և ջրահեռացման աշխատանքներ:*
*Մանրամասն ներկայացված է ճանապարհի երկայնական կտրվածք գծագրում:*

## *ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

*Նախագծված լայնական կտրվածքների համաձայն և համակարգչային Civil3D ծրագրի միջոցով կազմված է հողային աշխատանքների ամփոփագիր, ըստ որի հաշվվել է հողային աշխատանքների ծավալները, որոնք ներկայացված են ամփոփագիր 2-ում:*

## *ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔ*

*Նախատեսվում է իրականացնել հետևյալ պատվածքը, .*

- *Երթևեկելի մաս*
  - *I շերտ Մանրահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=4սմ*
  - *II շերտ Խոշորհատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=6սմ*
  - *III շերտ, Խճավազային հիմք (C5), h=20սմ*
  - *IV շերտ Ավազակոպճային շերտ h=10սմ*
- *Մայթեր*
  - *I շերտ Ավազահատիկ ասֆալտբետոն h=3սմ,*
  - *II շերտ Ավազակոպճային շերտ h=12սմ,*
- *Իջատեղեր*
  - *I շերտ Մանրահատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=4սմ*
  - *II շերտ Խոշորհատիկ ա/բետոն, „Բ"տիպ h=6սմ*
  - *III շերտ, Խճավազային հիմք (C5), h=20սմ*
  - *IV շերտ Ավազակոպճային շերտ h=10սմ*

***Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են համապատասխան ամփոփագրերում:***

## *ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ*

*Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրին: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամքով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանք վնասումից և ոչնչացումից:*

*Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ բնահողից և շին աղբից տեղափոխելով այն լցակույտ:*

*Շրջակա միջավայրի վրա ճանապարհի ազդեցությունը պետք է գնահատվի մինչև նախագծի իրականացումն ըստ ԳՕՍՏ 32847-2014 ստանդարտի:*

*Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների հետևանքները պետք է կանխատեսել բնական, տնտեսական և սոցիալական հետևյալ բաղադրիչների համար.*

1. *բնակչություն,*
2. *երթևեկության մասնակիցներ,*
3. *հող, բուսականություն, ջուր, օդ, լանդշաֆտ, կենդանիներ,*

4. *հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ,*
5. *ձայնային հարմարավետություն (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-04-2014 շինարարական նորմեր):*

*Շինարարության ժամանակ հաշվի առնել գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական կառուցվածքները /գազատար, ջրատար խողովակաշարեր, կապի և էլեկտրո մալուխներ/ տեղյակ պահելով համապատասխան կազմակերպություններին:*

*Բնապահպանական բոլոր միջոցառումները պետք է իրականացնել բնապահպանական կառավարման պլանին համապատասխան:*

## *ԱՄՑ ՉԱՓԱՆԻՇԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ*

*Ըստ ՀՀ կառավարության 2016թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի թիվ 38 արձանագրային որոշման անհրաժեշտ է կազմել մեթոդաբանություն ծածկի որակի գնահատման ընթացքում անհարթության միջազգային ցուցչի (ամց) չափանիշի փորձարկում: Ծածկը գնահատելու ամենակարևոր պայմաններից մեկը երթևեկելու որակն է: Ճանապարհի անհարթության կամ հարթության ստուգումներն իրականացվում են ծածկի վիճակը մշտադիտարկելու համար՝ նոր և վերանորոգված ծածկով երթևեկելու որակը գնահատելու նպատակով:*

*Անհարթության աստիճանի փոփոխությունը զգալի ազդեցություն ունի տնտեսական արդյունքների վրա: ԱՄՑ-ի չափումը թույլ է տալիս.*

*1) Իրականացնել օբյեկտիվ ծախսեր-օգուտներ վերլուծություն՝ սահմանափակ կապիտալ ռեսուրսների բաշխումն օպտիմալացնելու նպատակով:*

*2) Գնահատել ծրագրի փաստացի վերջնարդյունքները և դրանք համեմատել ակնկալվող վերջնարդյունքների հետ:*

